Հաստատված է
«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
բաժնետերերի արտահերթ
ժողովի կողմից
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

14 հոկտեմբերի 2022թ.

«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն Ընթացակարգը մշակված է Օրենքին, ԿԲ ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան, և կարգավորում է «ԷՖՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտի իրականացման կարգը, ընդգրկման բնագավառները, ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտ իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության ժամանակ ներկայացվող պահանջները, չափանիշները և աուդիտ իրականացնող անձի հաստատման ընթացակարգը:

1.2. Ընթացակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

Աուդիտորական խումբ. աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որոնք անմիջականորեն ընդգրկված են Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ,

Գործադիր տնօրեն. Ընկերության միանձնյա գործադիր մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումը,

Ընդհանուր ժողով. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով՝ Ընկերության կառավարման բարձրագույն մարմին,

Խորհուրդ. կառավարման մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում իրականացնում է Ընկերության ընդհանուր ղեկավարումը,

Ընկերություն. «ԷՖՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերություն ներդրումային ընկերությունը,

ԿԲ. ՀՀ կենտրոնական բանկ,

Պատասխանատու աուդիտոր. Աուդիտորական կազմակերպության՝ աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից,

Օրենք. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք:

1.3. Սույն Ընթացակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով սահմանված նշանակությունը:

2. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

2.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացվում է հետևյալ դեպքերում.

2.1.1. տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումից առաջ,

2.1.2. ցանկացած պահի՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 (հինգ) տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ / բաժնետերերի, Խորհրդի կամ ԿԲ պահանջով,

2.1.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

3. ԱՈՒԴԻՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

3.1. Եթե սույն Ընթացակարգով այլ բան սահմանված չէ, ապա Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտը պետք է ընդգրկի առնվազն հետևյալ բնագավառները.

3.1.1. հաշվապահական հաշվառում և ֆինանսական հաշվետվությունների կազմում,

3.1.2. հարկային հաշվառում և հարկային հաշվետվությունների համապատասխանություն ՀՀ հարկային օրենսդրության պահանջներին,

3.1.3. համապատասխանություն Օրենքով և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ ներդրումային ընկերության տնտեսական նորմատիվներին,

3.1.4. Ներքին աուդիտի գործունեության համապատասխանություն Օրենքով և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին,

3.1.5. ԿԲ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականություն և արժանահավատություն,

3.1.6. փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում իրականացվող միջոցառումների համապատասխանություն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և ԿԲ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

3.2. Սույն Ընթացակարգի 2.1.2.-2.1.3. կետերում նշված դեպքերում աուդիտի իրականացման պահանջը ներկայացրած անձի ցանկությամբ կամ այդպիսի պահանջ սահմանող համապատասխան իրավական ակտով կարող է սահմանվել ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի ընդգրկման բնագավառների ավելի նեղ և/կամ սույն Ընթացակարգի 3.1. կետում նշված բնագավառներից տարբերվող շրջանակ:

4. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Ընկերությունն իր ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպության ընտրությունն իրականացնում է հետևյալ բոլոր չափանիշներին բավարարող կազմակերպություններից, մասնավորապես.

4.1.1. աուդիտորական կազմակերպությունը պետք է լինի «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված մասնագիտացված կառույցի (այսուհետ՝ սույն ընթացակարգում Մասնագիտացված կառույց) անդամ,

4.1.2. աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա ֆինանսական կազմակերպությունների աուդիտի իրականացման առնվազն 5 (հինգ) տարվա աուդիտի իրականացման փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում ըստ միջազգային խմբի տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների վրա:

4.1.3. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է լինի Մասնագիտացված կառույցի անդամ, ունենա ներդրումային

ընկերության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 ներդրումային ընկերության աուդիտի իրականացման փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում և միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորման վկայական (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ),

4.1.4. Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է լինեն Մասնագիտացված կառույցի անդամ, ունենան աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում կամ միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորում (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ),

4.1.5. աուդիտորական կազմակերպությունը Ընկերության հետ կնքվող պայմանագրում պետք է իր համաձայնությունը տա Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու Ընկերության, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

4.1.6. աուդիտորական կազմակերպությունը կարող է իրականացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը անընդմեջ առավելագույնը 6 (վեց) տարի, ընդ որում, տվյալ աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել Ընկերության աուդիտը առավելագույնը 3 (երեք) տարի: Աուդիտորական կազմակերպությունը սույն կետում նշված 6 (վեց) տարի անընդմեջ աուդիտի իրականացման դեպքում չի կարող իրականացնել տվյալ ֆինանսական կազմակերպության աուդիտը առնվազն 3 (երեք) տարի:

4.2. Ընկերության և աուդիտորական կազմակերպության միջև պայմանագիրը կարող է կնքվել մինչև 3 տարի ժամկետով:

4.3. Ընկերության արտաքին աուդիտ իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով: Աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունը պետք է հրապարակվի մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 31-ը ներառյալ: Հայտարարությամբ սահմանվում է մրցութային

առաջարկությունների ներկայացման վերջնաժամկետ՝ հրապարակման ամսաթվից 10 (տասը) աշխատանքային օր:

4.4. Մրցույթի անցկացման օրը Գործադիր տնօրենն (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) իրականացնում է ներկայացված առաջարկությունների ուսումնասիրություն, ամփոփում է մրցույթի արդյունքները, որոնք համարվում են նախնական համաձայնության արժանացած և ներկայացվում են Ընդհանուր ժողովի հաստատմանը մինչև տվյալ տարվա նոյեմբերի 20-ը ներառյալ:

4.5. Ընդհանուր ժողովը մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում և հաստատում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտ իրականացնող անձին: Ընտրությունը կատարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան աուդիտորական ծառայություններ մատուցող կազմակերպություններից, որոնք միաժամանակ բավարարում են սույն Ընթացակարգի 4.1.1-4.1.6. կետերով սահմանված պահանջներին:

4.6. Սույն Ընթացակարգի 4.1 կետով սահմանված չափանիշների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է այն աուդիտորական կազմակերպությանը, որի աուդիտորական խմբում ներգրավված որակավորված աշխատակիցների տեսակարար կշիռն ավելի մեծ է (Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ և այլն, կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված որակավորում):

4.7. Ընդհանուր ժողովի կողմից սույն Ընթացակարգի 4.3. կետին համապատասխան արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության ընտրվելուց և հաստատվելուց հետո Ժողովը (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) հաստատում է նաև Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտի իրականացման համար ընտրված աուդիտորական կազմակերպության վարձատրության չափը, ինչից հետո ընտրված անձի հետ կնքվում է աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր:

4.8. Կնքված պայմանագրում պետք է նշվեն.

4.8.1. աուդիտի շրջանակները և այն ժամանակահատվածը, որի ընթացքում աուդիտը պետք է իրականացվի,

4.8.2. աուդիտորական կազմակերպության համաձայնությունը ԿԲ հրավերով Ընկերության, աուդիտորական կազմակերպության և ԿԲ միջև արտաքին աուդիտի արդյունքների եռակողմ քննարկմանը մասնակցելուն:

4.9. Սույն Ընթացակարգի 2.1.2. կետում նշված՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 (հինգ) տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ/բաժնետերերի կողմից Ընկերության արտաքին աուդիտ նախաձեռնվելու դեպքում աուդիտորական կազմակերպությունն ընտրվում է համապատասխան բաժնետիրոջ/բաժնետերերի կողմից՝ պայմանով, որ բավարարված լինեն սույն Ընթացակարգի 4.1 կետում նշված պահանջները:

4.10. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումից առաջ աուդիտի իրականացման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրությունը և վերջինիս հետ աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը պետք է իրականացվի մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը:

4.11. Աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացություն կազմելու պարտավորության ամրագրումից, պետք է նախատեսվի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Ընկերության ղեկավարությանը) կազմում:

4.12. Ընկերությունն աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև աուդիտն իրականացնող անձի կողմից եզրակացության ներկայացում՝

- Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ներդրումային ընկերության տնտեսական նորմատիվների պահանջներին համապատասխանության մասին,
- Ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի՝ Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին,
- Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության ու արժանահավատության մասին:

4.13. Աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը և հաշվետվությունը Ընկերության կողմից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն Ընթացակարգի բոլոր լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Ժողովի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) և ուժի մեջ են մտնում Ժողովի կողմից հաստատման պահից: